




ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ*

«Յարդարություն և յիշատակ հաստատել է այժմ քո. ողորմություն և հշմարտություն գնացնեմ առաջի երեսաց քոց» (Սաղմոս 92 (93) 15):

Արդարության հասկացողությունը, ըստ բոլոր կրոնների և փիլիսոփայական ուղղությունների, ունի բազում հշանակություններ, որոնք ժամանակի ընթացքում քաղաքակրթության և ժողովուրդների բարքերի զարգացմանը գուգընթաց ենթարկվել են զանազան փոփոխությունների: Մենք սույն հոդվածի մեջ կանգ ենք առնելու Հին և Նոր Կտակարաններում գլխավորաքար արդարության կրոնական հշանակության վրա:

Կրոնական իմաստով արդարությունը Աստուծո պատկերով ստեղծված մարդու և

հրա Արարչի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունն է: Արդարության վերաբերյալ, ըստ բովանակության, կան սակայն էական տարբերություններ Հին և Նոր Կտակարանների մեջ: Հին Կտակարանի արդարությունը հիմնված է Մովսիսական օրենքից բխող պատվիրանների կատարման վրա, իսկ Նոր Կտակարանի արդարությունը խաղըսվում է Քրիստոսի կողմից տրված շնորհների արդարության վրա (Հռոմ. 2 14, 15, է 4—6, Գաղատ. Գ 13, 24, Ե 18): «Չեմք ընդ օրինոք այլ ընդ շնորհօք»:

Աստվածաբանության մեջ արդարությունը յոթ գլխավոր առաքինություններից մեկն է համարվում, որոնցից չորսը կան մահ առնիկ հեղեմական փիլիսոփայության մեջ. արդարություն, խոհեմություն, ժուծկալություն, ուծ (հեղեմական փիլիսոփայություն), հավատք, հույս, սեր (քրիստոնեական մուածողություն): «...Բայց արդ մնան հաւատք, յոյս, սեր, սոքա երեքեան, և մեծ քան զսոսս սեր է» (Ա Կորնթ. ԺԳ 13):

* Սույն հոդվածը շարադրելիս որպես աղբյուր օգտագործել ենք հետևյալ աշխատությունները.

ա) «The Catholic Encyclopedia» New York, 1967.
բ) «The Abington Bible Commentary», New York, 1929.

գ) «Harper's Bible Dictionary», New York, 1961..

դ) Բատարանի սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:

ե) Աստուածաշունչ (գրքաքար), Վիեննա, 1929:

Արդարությունն այն առաքիլությունն է, որ ղեկավարում է մարդու վարքը և առիպում նրան չորհաբարել ուրիշի ազատությունը, իրավունքը, ստացվածքը, պատիվը և կյանքը:

Նոր Կտակարանում «արդար» են ճանաչվում Հիսուսի հայր Հովսեփը (Մատթ. Ա 19), Սիմեոն Ծերունին (Լուկ. Բ 25), Հովհաննես Մկրտիչը (Մարկ. Զ 20), Հովսեփ Արիմաթացին (Լուկ. ԻԳ 50), Կոննեխոսը (Գործք Ժ 22) և Հիսուս (Մատթ. ԻԷ 19):

Աստվածային արդարության կամ Աստվածաշնչում խոսվող արդարության գաղափարին անդրադառնալիս նախ պետք է նշել այն հավատալիքը, ըստ որի Աստված բոլոր մարդկանց դատավորն է: «Եւ ոչ գտանեմք զայլ որ նմանող զօրութեան նորա, որ զարդարն դատի՝ ո՛չ համարիցիս լսել նմա: Վասն որոյ երկիցեն ի նմանէ մարդիկ, երկիցեն ի նմանէ և իմաստունք սրտիւք» (Յովք ԼԷ 23—24):

Աստվածաշնչում Աստուծո դատաստանը հաճախ է հայտնվում երկրավոր կյանքում: Բայց երբ հետմահու դատաստանի հավատալիքի մասին է խոսվում, Աստված ներկայանում է որպես հանդերձյալ կյանքում տեղի ունենալիք դատաստանի դատավոր:

Աստուծո, որպես դատավորի, հղացքը կամ ըմբռնումը, ըստ որի աստվածային որոշումները պարտադիր են մարդկանց, մի գաղափար է, որն իսրայելացիների կրոնում զարգացել է՝ շրջապատի հեթանոսական կրոնների հետ զուգընթաց: Ուժը, որ բնութանրապես բոլոր կրոններում վերագրվում է աստվածներին, լավագույն կերպով արտահայտվում է դատելու մեղաշնորհի, օրենքների և վճիռների արձակելու իրավունքի մեջ, վճիռներ, որոնցից մարդ չի կարող խուսափել և ազատ մնալ:

Աստվածային դատաստանի հղացքը կամ ըմբռնումը, հետևաբար, հատակորեն կարելի է հասկանալ միայն արդարության գաղափարի հետ ունեցած իր առնչությամբ, որովհետև դատավորի գլխավոր պարտականությունն է «արդարություն անել»:

Մարդ արդար է, եթե նա ճիշտ հարաբերության մեջ է Աստուծո և մարդկանց հետ: Որքան ժամանակ որ այս ուղիղ սկզբունքը անհրաժեշտ է կյանքի բոլոր գործերը կարգավորելու համար, նույնքան ժամանակ և այլ կարելի է համարել կյանքի բարձրագույն չափանիշ:

Արդի բաղաբաղություն չափանիշով արդար վարք ունենալ, նշանակում է համակերպվել այն օրենքներին, որոնք բացարձակորեն ուղիղ և ճշմարիտ են համարվում:

Հին Կտակարանում, սակայն, մարդու վարքը չափվում էր ոչ թե ինչ-որ իդեալա-

կան չափանիշով, այլ անթերի կատարմով բոլոր այն գործերի, որոնք առաջ են գալիս մարդկանց՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունների ընթացքում: Մարդիկ ապրում և գործում են տարբեր հարաբերություններով՝ ընկերային-հասարակական, ազգային, ընտանեկան, տնտեսական, որոնցից յուրաքանչյուրն առաջադրում է յուրահատուկ պահանջներ:

Բացի սրանից, կա նաև մարդուն հատուկ հարաբերությունն Աստուծո հետ: Այստեղ ևս արդար մարդն է, որ կատարում է բոլոր այն պահանջները, որոնք դրվել են նրա վրա սույն հարաբերության ընթացքում: Ի պատասխան աստվածային պատվիրանի կատարման, Աստված ցույց է տալիս իր արդարությունը՝ արդար գործերով, երբ նա հաստատ է մնում այն դերի մեջ, որն ինքն է սահմանել Իսրայելի հետ ունեցած իր մասնավոր հարաբերության պատճառով: Աստված սույն հարաբերության առաջադրած պահանջները կատարում է մասնավորաբար այն ժամանակ, երբ նա գործում է որպես դատավոր: Սուրբ Գրքում աստվածային որոշումների մասին օրինակներ շատ կան: Հին Կտակարանում արդարության և դատաստանի գաղափարներն այնքան են տերտորեն կապակցված միմյանց, որ այս երկու տերմիններն աստվածաշնչական բնագրերում հաճախ միասնաբար են հանդես գալիս՝ գրական շարքին դառնալու աստիճան: Այդպիսին է, օրինակ, արդար դատավոր արտահայտությունը:

Դատ կամ դատաստան հասկացությունը ինքնին նշանակում է՝ մի վեճ հարթել կամ իրազավորել: Ինչքան էլ որ վիճողներից մեկը ճիշտ լինի և մյուսը սխալ, դատավորի պարտականությունն է՝ այնպես վարվել, որ արդարն իր իրավունքից չզրկվի, իսկ մեղավորը՝ պատժվի: «Եւ եթե լինիցի հակառակություն ի մեջ մարդկան, մատիցեն լստեան և դատեսցի և արդարացուցեն զարդարն և պարտադրեսցեն զամպարիշտն» (Բ Օրինաց ԻԵ 1):

Բողոքի սաղմունքից շատերն արտահայտում են աղերսողի պատճառաբանություններն Աստուծո առաջ, որ նա արդարություն անի, այսինքն՝ ճանաչի աստվածային հարաբերության պահանջներն իր ծառայի նկատմամբ՝ արդարացնելով նրան իր թշնամիների առաջ:

Ամենի մարդու արդարացումն Աստուծո դատաստանի միջոցով, բերում է նաև դատապարտումը մեղավոր հակառակորդի: Հետևաբար դատաստանը համազոր է դառնում պատժի և դատապարտության:

Հին Կտակարանի ըմբռնմամբ Աստվածային դատաստան հասկացությունն այն

ժամանակն է, երբ մեղքին հաշորդում են անկումը և պատիժը, իսկ բարի գործերին՝ խոստացված վարձատրությունը:

Ադամի և Եվայի (Ծննդ. 4), Կալեմի և Աբելի (Ծննդ. 7 1—15), Նոյի սերնդի (Ծննդ. 2 2—8), Սողոմ Գոմորի (ԾԼ 18—19) և Հովսեփի վաճառքն իր եղբայրների կողմից (Ծննդ. ԼԵ 12—35) պատկերում են այն հավատալիքը, թե «գի գոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ» (Գաղ. 2 8):

Քանի որ արդարությունն ու սրբությունը, որպես աստվածային բնության արտահայտություն, միասին են հանդես գալիս, Աստված հաշվի է առնում մարդկային մեղքերը: Պատիժը նրա սուրբ բնության հակազդեցությունն է՝ ընդդեմ անսուրբ և անարդար գործերի, առանց որի աշխարհի բարոյական հավասարակշռությունը կարելի չէ պահպանել: Պատժի ուղղիչ ազդեցությունն աստվածային նպատակի մեկ մասն է, բայց այդ ազդեցությունը ներգործուն չի կարող լինել այնքան ժամանակ, մինչև մեղավորը ճանաչի տրված պատժի արդարությունը և դավանի Աստուծո բարոյական հեղինակությունը: Հետևաբար պատիժը և ներումը Աստուծո արդարության արտահայտություններն են:

Ծննդոց Գրքից սկսած, Աստուծո դատաստանը չարագործությունների նկատմամբ հանդես է գալիս Հին Կտակարանի համարյա բոլոր գրքերում. Ադամի և Եվայի պատժից մինչև մակաբայցեցիների բանակի զինվորների ճակատագիրը: Տիրոջ բարոյական կամքը տիրում է ամեն տեղ: Նա անսարքեր չէ իր արարածների անհնազանդությանը և երբեք մեղավորին անպատիժ չի թողնում. «...գի ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց որդւոց, յերիս և ի չորս ազգս առելեաց իմոց. և առնեմ գողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց, և ոչք պահեն զհրամանս իմ» (Ելից Ի 5—6):

Առակաց Գրքում ևս այս մասին օրինակները շատ են. «Յամենայն տեղիս աչք Տեառն դիտեն զբարիս և զչարս»: Ոչ մի բան չի վրիպում նրա ամենատես աչքից:

Արդարությունը, որպես մարդկային առաքինություն և հատկանիշ, կախում ունի այն իրողությունից, որ մարդն ստեղծվել է Աստուծո պատկերի նմանությամբ: Հին Կտակարանում իսրայելացիների ընկերային-հավաքական կյանքում ընտանիքի գլուխ հանդիսացող հայրը տոհմական հեղինակություն ուներ իրավական գործերով զբաղվելու և ընտանիքի անդամների միջև ծագած վեճերը հարթելու և կարգավորելու:

«Հանգի գիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իմոց և տան իւրոյ յետ իւր՝ պահել զճանա-

պարես Տեառն և առնել զարդարութիւն և զիրաւունս. և ածցէ Տէր Աստուած ի վերայ Աբրահամու զամենայն գոր խօսեցաւ ընդ մեա» (Ծննդ. ԺԼ 19):

Մովսէսի ժամանակ Իսրայելի տասներկու ցեղերի ավագները նրանից իշխանություն ստացան՝ իրավական հարցերով զբաղվելու և դատ-դատաստան տեսնելու:

«Եւ ընտրեաց Մովսէս յամենայն Իսրայելէ արս զօրաւորս, և արար զնոսա ի վերայ նոցա հազարապետս և հարիւրապետս և յիննապետս և տասնապետս: Եւ դատէին զժողովուրդն յամենայն ժամ, բայց զբան ինչ մեծ հասուցանէին առ Մովսէս, և զամենայն բան թեթև՝ ինքեանք դատէին» (Ելից ԺԼ 25—26):

Մովսէսի մահից հետո, դատավորների տիրապետության շրջանում, նրանց վրա պարտականություն էր դրվել՝ դատաստանական գործերով զբաղվելու և արդարություն բաշխելու: Նրանց պատվիրված էր իրենց որոշումների և վճիռների մեջ արդար լինել, որպեսզի դրանք ընդունելի լինեն Աստուծո ատյանի առաջ:

«Դատաւորս և առնեադայիրս կացուցանես յամենայն քաղաքս քո զոր Տէր Աստուած քո տացէ քեզ քստ ցեղից և դատեսցեն զժողովուրդն դատաստան արդար: Եւ մի՛ աշտիցեն երեսաց, և մի՛ առնուցուն կաշառս. քանզի կաշառ կուրացուցանէ զաչս իմաստնոց և ապականէ զբանս արդարոց: Արդարութեամբ արասցես զիրաւունս զի կեցցէք և մտանիցէք ժառանգել զերկիրն զոր Տէր Աստուած տացէ ձեզ» (Բ Օրինաց ԺԶ 18—20):

Թագավորի արդար լինելը թագավորելու համար առաքինության բարձրագույն չափանիշ էր համարվում Հին Կտակարանում:

«Եւ թագաւորեաց Դաւիթ ի վերայ ամենայն Իսրայելի, և էր առնել իրաւունս և արդարութիւն ամենայն ժողովրդեան իւրում» (Ա Մնաց. ԺԼ 14): Հետագայում մարգարեները, ընդհանրացնելով այս առաքինությունը, ցույց տվեցին, որ Աստված «արդարություն անել» է պահանջում յուրաքանչյուր մարդուց: «Պատմեցաւ քեզ, ո՛վ մարդ, զի՛նչ է բարի կամ զի՛նչ խնդրէ ի քէն Տէր, բայց առնել զիրաւունս և սիրել զգողորմութիւն, և պատրաստ լինել երթալոյ զկնի Տեառն Աստուծոյ քո» (Միքիէ 2 8):

Աստվածային դատաստանի ըմբռնումը շարունակվում և խորանում է Նոր Կտակարանում, ուր առավել ևս շեշտվում է հեռուստեղի ունենալիք դատաստանի հավատալիքը: Ըստ Նոր Կտակարանի, Աստուծո կողմից սահմանված դատաստանը տեղի է ունենալու մահից հետո. մինչ այդ, բարին ու

չարք պիտի շարունակեն անել ու բազմակա միջև «հինգի» օրը:

Նոր Կտակարանում դատաստանի գաղափարի հետ առնչություն ունեցող արտահայտությունների ենթ հանդիպում ապաշխարության և բարի գործեր անելու հրավեր կարդացող խրատական հատվածներում:

Միայն ապաշխարությունը կարող է փրկել մարդուն գալիք դատաստանից: Խուսափելու համար զարհուրելի տանջանքներից, կյանքում վնասելիք ոչ մի գին բարձր չէ:

«Եթե՛ ձեռն քո կամ ոտն գալթակդեցուցանե՛ գրեզ, հա՛տ գնա և ընկեա՛ ի քէն. լաւ իցէ՛ քեզ միաձեռանի կամ կող մտանել ի կեանս, քան երկուս ձեռն և երկուս ոտն ունել, և անկանել ի հոտն լաւիտեանկան: Եւ եթե՛ ակն քո գալթակդեցուցանե՛ գրեզ, խլեա՛ գնա և ընկեա՛ ի քէն. լաւ իցէ՛ քեզ միականի մտանել ի կեանս, քան երկուս աչս ունել և անկանել ի գեհեն հրոյն» (Մատթ. ԺԸ 8—9):

Իր թղթերում Պողոս առաքյալը հեթանոսությունից քրիստոնյա դարձած իր հետեւորդներին հիշեցնում է. «...քանզի ամենեքին կալոց ենք առաջի ատենին Քրիստոսի» (Հռովմ. ԺԴ 10): Իսկ կորնթացիներին ուղղված իր երկրորդ թղթում նա խոսում է Քրիստոսի առաջ տեղի ունենալիք դատաստանի մասին՝ ասելով. «Քանզի ամենեցուն մեզ հանդիման լինել կալ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իրաքանչիւր իրով մարմնով գոր ինչ գործեաց յառաջ՝ եթե՛ բարի և եթե՛ չար» (Բ Կորնթ. Ե 10):

Ավետարաններում և եկեղեցու հայրերի գրվածքներում հանդիպում ենք նաև Աստուծո շարունակական կամ տևական դատաստանի հավատալիքին կամ ըմբռնմանը: Մարդիկ, թե՛ որպես անհատներ և թե՛ որպես ընկերային խմբավորումներ, ապրում են Աստուծո շարունակական կամ տևական դատաստանի առաջ գտնվելու գիտակցությամբ: Նրանք իրենց ազատ կամքով ինչ քալ որ առնում են կյանքում, Աստուծո կողմից կշռվում է մարդկության համար սահմանված նպատակի իրագործումների և սիրո նմարում: Երկրավոր կյանքի ընթացքում, երբ մարդկային արարածներն իրենց ազատ կամքով ընտրում են բարին և դրանով իսկ հնարավորություն ունենում հոգեպես անելու և կատարելագործվելու, այսպիսի Աստուծո դատաստանն իր մեջ պարունակում է նաև սիրո նախաձեռնությունը: Աստված պարգայես չի դատում կատարվածը, այլ շարունակ հրավիրում է մարդկանց ավելի ամբողջական և իմաստալից մի կյանք ապրելու իրենով՝ զղջումի և ապաշխարության ճանապարհով:

Քրիստոսի մահվամբ Աստուծո սիրո և ո-

ղորմության դատաստանն առարկայորեն տարածվում է մեղավորների վրա: «Յայտնեաց Աստուած զւերն իւր ի մեզ, զի միշդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ» (Հռովմ. Ե 8), գրում է Պողոս առաքյալը:

Մեղավորի զղջումից և նրա ապաշխարումից հետո, Աստուծո արդար դատաստանի հաջորդումով սկսում է «արդարացման» ընթացքը, որի միջոցով Աստված անարդար մարդուն փոխում է դարձնում է արդար, թըշնամուն՝ բարեկամ, և այսպիսով իրագործում է իր նպատակը համաձայն այն քայլի, որ մարդն ատել է նրա նախաձեռնության դիմաց: Աստուծո կողմից արդարացման այս դատաստանը նրա ողորմածության հաղթանակն է և գերագույն արտահայտությունը գթասատ սիրո և ներողամտության: «Ապա եթե՛ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբէ զմեզ յամենայն անիրաւութենէ» (Ա Յովհ. Ա 9), գրում է Հովհաննես ավետարանիչը:

Աստվածաշնչի գրքերը հատակորեն խոսում են այն մասին, որ Աստուծո շարունակական դատաստանը տարածվում է ոչ միայն անհատների վրա, այլ նաև մարդկային ընկերությունների վրա: Մարդկանց հավատարմությունը կամ անհավատարմությունն Աստուծո հանդեպ իր դրական կամ բացասական ազդեցությունն է թողնում իրենց հաջորդների վրա: «Եւ արդ բարձրացի ձեռն քո, Տէր, որպէս խոսեցար և ասացեր, թէ Տէր երկայնաւիտ է և բազումողորմ և ճըշմարիտ, բառնայ զանօրէնութիւնս և զանիբաւութիւնս և զմեղս, և սրբելով ոչ սրբէ: զպարտաւորն, հատուցանէ զմեղս հարանց յորդիս մինչև յերիս և ի չորս ազգս» (Թուոց ԺԴ 17—18):

Արդի աստվածաբանական ըմբռնումով, հասարակական կյանքում մարդկային խըմբավորումները ծառայում են որպես գործիք աստվածային նախախնամությանը՝ նրա նպատակներն իրագործելու աշխարհում: Պատմության մեջ երբեմն բնական աղետներ կամ բարգավաճման շրջաններ արտացոլում են Աստուծո դատաստանը, ինչպես այդ նկատում ենք պատկերված Հին Կտակարանում: Բայց ընդհանրապես Աստուծո դատաստանը պետք է տեսնել ընկերության ծոցում բարօրության, անդորրության ներկայության կամ բացակայության մեջ, ընձեռված պատեհությունների և անձնական առաջադիմության, օրենքի հարգման, կառավարական մարմինների նկատմամբ վստահության, ուրիշների իրավունքների նկատմամբ ճիշտ վերաբերմունքի և այն ամենի մեջ, ինչ որ ժողովրդին էֆեկտիվ կերպով

կապում է գործակցաբար աշխատելու բոլորի բարօրության համար: Ինչ չափով որ քաղաքացիները կամովին համակերպվում են բանակականության սահմանած կարգ ու կանոնին, որը հայտնում է Աստուծո կամքը, նույն չափով էլ նրանք, որպես հավաքականություն, փորձառություն են ունենում կարգ ու կանոնի անդորրությունն ապրելու և խաղաղության բարիքները վայելելու:

Մարդկային բոլոր ընկերություններն ու հաստատությունները հետևում են նույն օրհնակին: Երբ հասարակության անդամներն իսկապես գործակցում են հասարակաց բարիքի ստեղծման համար, ընկերությունը բարգավաճում է, և բոլորն օգտվում են ստեղծված հասարակաց բարիքներից: Բայց երբ ընկերության մարմնի անդամները ըսկըսում են իրենց եսասիրական շահերն ու նպատակները հետապնդել, հասարակությունը գնում է դեպի ձախողության և, ի վերջո, դեպի քայքայում:

Եկեղեցին, որպես Քրիստոսի խորհրդավոր մարմին, սուրբ Հոգու շնորհներով կենդանացած ու գորացած, Քրիստոսի առաքելությամբ և հեղինակությամբ պաշտոն ունի ուսուցանելու, կառավարելու, մաքրելու և փրկելու մարդկանց:

Եկեղեցին իր հեղինակությունը ստացել է Քրիստոսից. այդ չի նշանակում, սակայն, որ նրա պաշտոնյաները կարող են գործադրել իրենց հեղինակությունը լոկ խորհրդողների կատարմամբ կամ հավատքի և ավետարանական ճշմարտությունների մեկնաբանմամբ, որովհետև նրանք էլ մարդկային արարածներ են և հետևաբար՝ սխալական: Աստուծո շարունակական դատաստանը եկեղեցու նկատմամբ ուղղակի կերպով չի ազդում նրա արտաքին հաջողությունների և երկրակյո բարօրության վրա: Այդ բոլորը եկեղեցու առաքելության հետ ուղղակի առնչություն ունեցող խնդիրներ չեն: Եկեղեցին պետք է ապրի կենսունակ հավատքի, պաշտամունքի, միության, սիրո և առաքելական մտահոգություններով լիցքավորված մի կյանք, որն արդյունքը պետք է լինի Աստուծո կողմից նրա համար սահմանված նպատակի իրագործման: Այլապես եկեղեցին կարող է բաժան-բաժան լինել, ձևական բնույթ ստանալ, իր ազդեցությունը կորցնել և Աստուծո նպատակն ու Քրիստոսի գործը ի դերն հանել: Եկեղեցու կյանքում ոչ ոք չի կարող ինքն իրեն ազատ զգալ իր ստանձնած պարտավորություններից Աստուծո դատաստանի առաջ՝ իր գրաված դիրքի պատճառով: Եկեղեցին նույնպես, որպես ամբողջություն, չի կարող ակնկալել, որ, ինչ էլ լինի իր վերաբերմունքը Աստուծո հանդեպ, իր առաքելությունը լիառատ կերպով պլու-

դաբեր լինի աշխարհում լոկ այն պատճառով, որ Աստված սուրբ Հոգու միջոցով գործում է իր մեջ:

Աստվածաբանության մեջ քրիստոնեական բարոյական վարդապետության գրի-խավոր հատկանիշն է կազմում սիրո և արդարության գաղափարի անբաժանելիության ըմբռնումը: Աստուծո և ընկերոջը սիրելու միջոցով է, որ Աստուծո թագավորությունը հաստատվում և իրագործվում է մեր մեջ: «Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան: Եւ երկրորդն մնան սմին, սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո. մեծ քան զտասայլ պատուիրան ոչ գոյ» (Մարկոս ԺԲ 30—31): Բայց դեռևս այս սերը չի կարող վաւերական լինել, մինչև որ քրիստոնեական տեւական չփորձի իր անմիջական շրջապատը ձևավորել սիրո նույն դիմամիկ ուժով: Միայն այս կերպով է, որ մարդ անկեղծորեն փոխհատուցած կլինի այն արդարությունը, որ Աստված ձրիաբար տվել է իրեն:

Աստվածաբանական տեսակետից մարդկային հարաբերությունների միջև եղած արդարությունը չէ առաջնայինը, այլ այն գերագույն արդարությունը, որը հատուկ է Աստուծո:

Կրոնական իմաստով, մարդկանց միջև արդարությունը իսկապես քրիստոնեական է դառնում միայն այն ժամանակ, երբ մարդիկ Աստուծո արդարությունն իրենց նկատմամբ փոխհատուցում են արդար գործերով և իրենց սիրով դեպի իրենց մտանքներ:

Հիսուսի արդարության օրենքը, որը հիմք էր հանդիսանալու մարդկանց՝ իրենց վարքը ճշտելու ուրիշների նկատմամբ, ոսկեղեն օրենքն էր. «Չամենայն զոր միանգամ կամիչիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպես և դուք արարէք նոցա, զի այս իսկ են օրենքն և մարգարէք» (Մատթ. Է 12): Միայն սերը կարող է մարդկային սրտին տալ այսպիսի կատարյալ որակ, որը հատկանիշն է աստվածային բնության. «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե 48):

Աստված սեր է, և նրա արդարության արտահայտությունները՝ նրա գործերը, խոսում են հիմնականում նրա սիրո մասին:

Նկատի ունենալով սիրո և արդարության միջև գոյություն ունեցող կապը, կարող ենք ասել հետևյալը.

Ա.—Սերն ավելի հիմնական է, քան արդարությունը:

Բ.—Սերը լավագույնս է երաշխավորում արդարության կատարումը և, համապատասխանաբար, արդարության մեջ ձախո-

դումը՝ սիրո ձախողումն է ցույց տալիս:

Գ.—Արդարության կատարումը պետք է իրագործվի սիրո ոգով:

Դ.—Սերը հատակ է դարձնում արդարությունը տեսնելու և այն լայնորեն տարածելու հնարավորությունները:

Ե.—Երբ հարցը վերաբերում է մարդու առօրյա, անձնական կյանքի հետ կապված խնդիրներին, նա, որ սիրո պատվանդանի վրա է կանգնած, առաջին հերթին նկատի կունենա ոչ այնքան ուրիշներին արդարություն անելու նվազագույն պահանջները, որքան ընկերության իսկական ու գործնական կարիքները:

Միայն սիրո մեջ անելու և կատարելագործվելու միջոցով է, որ մարդ ընդունակ է դառնում անհատի իրական ու վեհ պահանջները գլխավոր պատվիրանի՝ Աստծուն և ընկերոջը սիրելու համաձայն այն շնորհի պարգևների, որոնք ստացել է սուրբ Հոգուց:

Պողոս առաքյալը հոռվմայեցիներին և գաղատացիներին ուղղված իր թղթերում իրար է հակադրում օրենքի և հավատի արդարությունները: Նա ասում է, որ հավատի արդարությունը սիրո շնորհով միայն կարելի է իրականացնել: Մարդու հետ շնորհով վարվել, նշանակում է այնպես վարվել, ինչպես օրենքով կարելի պիտի չլիներ վարվել: Ծնորհը կարող է արդար անհատի մարդուն, որին օրենքն անարդար է հայտարարում: Ծնորհը կարող է անել այն, որովհետև նրա լծակներն են հավատն ու սերը:

Իր առաքելության սկզբում, Աստուծո թագավորության մասին խոսելիս, Քրիստոս առաջին հերթին իր աշակերտներին զգուշացրեց՝ ասելով.

«Բայց ասեմ ձեզ, զի եթե ոչ առանելուց արդարութիւն ձեր անելի քան զդպրացն և զփարիսեցոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից» (Մատթ. Ե 20): Քրիստոսի ժամանակ փարիսեցիների համար արդարությունը դարձել էր արտաքին ձևական պարտավորությունների մի սառն օրենք: Հիսուս լեռան իր քարոզի մեջ խորացրեց արդարության իմաստը՝ շեշտելով սրտի հետ ունեցող դրա կապը: «Ամենայն որ բարկանայ եղբոր ի-

րում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորում՝ պարտաւոր լիցի ի գեհեհեն հրոյն: Եթէ մատուցանիցես զպատարագք ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն և երթ նախ հաշտեսց ընդ եղբոր քում, և ապա եկեալ մատուցիր զպատարագն քո» (Մատթ. Ե 22—24):

Հիսուսի այս «նոր» արդարության գաղափարը շեշտվում է Մատթեոսի Ավետարանի Ե գլխի 6-րդ համարում. «Երանի որ քաղցեալ և ծարսի իցեն արդարութեան, զի նոքա լազեսցին»:

Աստուծո թագավորության արդարությունը, ուրիշ խոսքով, հիմնված է Աստուծո հետ մի նոր և կատարյալ հարաբերության վրա, միջնորդությամբ Հիսուսի, այնպես, ինչպես, Հին Ուխտի պատվիրանները միջնորդվել էին Մովսեսի միջոցով: Նոր Ուխտն իր հետ բերեց մի նոր օրենք: Եվ երբ նոր օրենքը հակադրվեց հին օրենքի փարիսեցիական մեկնաբանությանը (թլփատություն, շաբաթ օրը սուրբ պահել, ողորմություն անել և այլն), Քրիստոս չվարանեց ողորմությունն ու սերը դնելու Հին Ուխտի պատվիրաններից առաջ:

Ի հակադրություն արդարացման կամ սրբացման փարիսեցիական արտաքին ձևերի, Հիսուս պահանջեց ներքին կապը հավատացյալի և Աստուծո միջև՝ մերժելով և դատապարտելով արտաքին ցուցամոլությունը՝ լոկ ուրիշների աչքին հաճույալի երեվալու համար: Հիսուս առաջ քաշեց արդարության գաղափարը շատ ավելի լայն առումով: Ըստ դրան, մովսիսական օրենքի միջոցով ձեռք բերվելիք իրավական սրբացման փոխարեն մարդու կյանքի նպատակը պետք է լինի անմեղության և սրբության մի կյանք ապրելը՝ սուրբ Հոգու շնորհների և հավատի միջոցով, որին ի պատասխան Աստված մարդուն անմեղ և սուրբ պիտի հայտարարի իր արդար դատաստանի առաջ:

Ահա այս է Ավետարանի պատգամը:

